

Ա. ՖԻՐՍՈՎ

ԻՆՉ Ե ԱՇԽՈՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

331.8
Ց-65

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎՅԱՆ
ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

1934

34-А
Ca 863
331.8
8-65

15 JAN 2010

Ա. ՖԻՐՍՈՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ի Ն Չ Ե Ա Ղ Խ Ո Ր Ը

Փարզմ. Եվարդ



ԱԶՈՎ-ՍԵՎՅՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՑԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԽՈՍՏՈՎ-ԴՈՆ 1934



**ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ, ԻՍԿ ԿՈՒՏՆՏԵՍԱ-
ՎԱՆՆԵՐԻՆ ՈՒՆԵՎՈՐ ԳԱՐՁՆԵԼԸ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԳԻՐ Ե**

Այժմ չկան այնպիսի կոլտնտեսականներ, վորոնք չիմանան մեր բոլշևիկները կոմունիստական կուսակցության կարևորագույն լոզունգը կոլտնտեսությունների և կոլտնտեսականների վերաբերյալ — «դարձնել բոլոր կոլտնտեսությունները բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին ունևոր»:

Ընկեր Ստալինը հարվածային կոլտնտեսականների համաժողովական առաջին համագումարում ասաց.

«Մենք ձեռք բերինք այն, վոր կոլտնտեսությունների շնորհիվ չքավորներին բարձրացրինք մինչև միջակների մակարդակը: Դա շատ լավ է: Բայց դա քիչ է: Մենք այժմ պետք է ձգտենք մի քայլ յեվա առաջ շարժվել և ոգնել բոլոր կոլտնտեսականներին, թե նախկին չքավորներին, թե միջակներին բարձրանալու ունևորների մակարդակը: Այդ բանին կարելի յե հասնել, և մենք պետք է հասնենք, ինչ էլ վոր լինի»:

Այդ բանն ասվել է 1933 թվի սկզբին: Այժմ մենք գիտենք, վոր մեր յերկրամասի կոլտնտեսությունները կուսակցության ղեկավարությամբ մի տարվա ընթացքում ուղղվեցին կուլակություն կազմակերպած սաբոտաժի ծանր հետևանքերից, իսկ շատ հարյուրավոր կոլտնտեսություններ իսկական բոլշևիկյան աշխատանքի հետևանքով արգեն ընդհուպ մոտեցել են կոլտնտեսության ունևոր կյանքին: Ի՞նչ կարելի յե համարել, յեթե վոչ բոլշևիկյան այն կոլտնտեսությունների աշխատանքը, վորոնք անցյալ տարի հաջողությամբ գլուխ բերելով ցանքը, մշակումն ու բերքահավաքը, հոկտեմբերի 5-ին ժամկետից առաջ կատարեցին իրենց բոլոր պարտավորությունները պետության հանդեպ և կոլտնտեսականների յուրաքանչյուր աշխուրին տվին 4 — 8 կիլոգրամ և ավելի հացահատիկ ու 50 կոպ. մինչև 1 ուսւք.



61219-67

Ответственный редактор Г. А. ПОТЕНЦ Тех. редактор О. ТЕР ДАВЫДОВ

Сдано в набор 5/V 1934 г. Подписано в печать 21/V 1934 г.
Издание с-х 269/3847 Объем печ. лист
Статформат А5-148x210, Заказ № 2401
Уполкрайлит Б—3882 Тираж 1000

Тип. им. „Стачки 1902 г.“ АЧКПО Ростов н-Дону

և ավելի փոք: Ճիշտ է, դա դեռ շատ քիչ է: Ընկեր Ստալինը Դնեպրոստրոյի հարվածայինների հետ ունեցած զրույցում ուղղակի ասաց. «Մինչեւ անգամ քառ, քառերկու կիլոգրամ մի աշխուրհն դեռ քիչ է — հարկավոր է ավելին, յեւ կոյսնետականները շատ ավելի կունենան, յերե նրանք ազնվաբար աշխատեն կոյսնետարայան մեջ»:

Յերկրորդ հնգամյակի յերկրորդ տարում կոլտնտեսութունները գարնանացանին դիմավորեցին ավելի ամրապնդված և նախապատրաստված: Կուսակցութայան Յերկրկումի և քաղբաժինների բոլշևիկյան ղեկավարութայան հետևանքով կոլտնտեսութայունները լրիվ և իր ժամանակին ամբարեցին սերմացուն, ավելի լավ վերանորոգեցին գործիքները և ավելի լավ նախապատրաստեցին գարնանացան աշխատանքների համար քաղող ուժը, քան 1933 թվին: ՄՏ կայանների տրակտորային պարկը լրացվեց նոր տրակտորներով: Այդ բոլորը թույլ կտա կոլտնտեսութայուններին ավելի արագ և լավ անցկացնել ցանքը, հետևաբար դրանով հենց կապահովվի ավելի բարձր բերքատվութայունը: Բացի դրանից, կուսակցութայունը և կառավարութայունը կոլտնտեսութայուններին տվին լրացուցիչ արտոնութայուններ. համարյա մի քառորդի չափ կրճատվեցին հացահանձնումները յերկրամասում, անցյալ տարվա համեմատութայամբ զգալիորեն պակասեցված է մթերավճարը ցածր բեք սվող կոյսնետարայուններում, նրանց վրայից ամբողջովին վերացված է 1933 թվի հացահանձնումների հետևանքով պարտքը, յերեք տարով յերկրացված է սերմացվի պարենային վարկերի վերադարձը, վորոնք կոլտնտեսութայուններին տրվել են 1933 թվին և 1934 թվի գարնանը:

Կառավարութայան և կուսակցութայան այդ միջոցառումներն ստեղծեցին բոլոր անհրաժեշտ պայմանները կոլտնտեսութայուններում իսկական բոլշևիկյան ձևով անցկացնելու համար բոլոր գյուղատնտեսական աշխատանքներն ամբողջ տարվա ընթացքում, սկսած գարնանացանից և վերջացրած բերքահավաքով ու աշնանացանով: Մնացած բոլորը կախված է բացառապես կոլտնտեսականներից՝ իրենցից, կախված է նրանից, թե ինչպես կոլտնտեսականներն իրենք կպայքարեն կուլակների և սպիտակ զվարդիականութայան մնացորդների ու նրանց հետևողների, գողերի, ծուլերի, սիմուլյանտների ու կորպիչների դեմ:

Կոլտնտեսականները պետք է հաստատապես հիշեն ընկեր Ստալինի խոսքերը, վոր ասել է նա Դնեպրոստրոյի հարվածայինների հետ զրուցելիս.

«Նշանակում է, կոյսնետականներն ամեն ինչ ունեն, վորպեսզի ապրեն ունեվոր: Նրանց պեք է մի բան յեւս, աշխատել ազնվաբար կոյսնետարայան մեջ յեւ պահպանել կոյսնետային բարիքը, յեւ յերե բոլոր կոյսնետականները, յեւ վոչ թե մեծամասնությունը, աշխատեն ազնվաբար, կոյսնետարայունները կյցվեն մթերներով, նրանք կյցվեն ամեն ճեսակ բարիքով, յեւ մեր յերկիրը կլինի ամենահարուստ յերկիրն աշխարհում»:

Ճիշտ պահանջ դրին հարվածայինները կոլտնտեսականների առաջին Համամիութենական համագումարում: ԽՍՀՄ-ի բոլոր կոլտնտեսական գյուղացիներին ուղղած իրենց դիմումի մեջ նրանք գրում էին. «Յուրաքանչյուր ազնիվ կոլտնտեսական, յուրաքանչյուր հարվածային պետք է պատասխանատու լինի վոչ միայն իր համար, այլ առնվազն իր մոտիկ հարեվաններից, աշխատանքի ընկերներից տաս մարդու համար: Միայն այն ժամանակ, յերբ նա ինքն ազնվորեն աշխատելով ձեռք բերի այն, վոր իր շուրջն ուրիշ տասնյակներ նույնպես ազնվաբար աշխատեն, միայն այն ժամանակ, յերբ նա անողորքաբար մեքկացնի փաստարարներին, կուլակներին, սրիկաներին, գողերին, չարամիտ ծուլերին և կարողանա բարձրացնել նրանց դեմ մյուս ազնիվ կոլտնտեսականներին և վոչ թե լուռ մնա, բոլոր խայտառակութայուններին նայի մասների արանքով—միայն այդ ժամանակ նա իրավունք կունենա կրելու հարվածային պատվավոր գրոշը, միայն այդ ժամանակ նա հաջողութայուն ձեռք կբերի. միայն այդ ժամանակ զուր չեն անցնի հարվածայինների աշխատանքները»:

ԿՈՒՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏԱՎԱՐԱ ԶԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ

Կոլտնտեսութայուններում դեռ այժմ էլ հաճախ լսվում է, թե ինչպես առանձին կոլտնտեսականներ գանգատվելով իբր թե կոլտնտեսութայան վատ կարգերի դեմ, այսպիսի պահանջ են դնում—կոլտնտեսութայան մեջ սահմանել այնպիսի կարգ, ինչպես ֆաբրիկայում կամ գործարանում է կամ թե խորհրտնտեսութայան մեջ, վորտեղ յուրաքանչյուր բանվոր ամեն ամիս աշխատավարձ է ստանում: Կոլեկտիվացման առաջին տարիներում կոլտնտեսութայուններից շատերն իրենց կոլեկտիվ աշխատանքն սկսում էին հենց այն ձևով, վոր յուրաքանչյուր կոլտնտեսականի ամսական կամ օրական կայուն աշխատավարձ էին նշանակում: Դա առաջանում էր նրանից, վոր յերիտասարդ

կոլտնտեսականները կոլեկտիվ տնտեսութեան մեջ դեռ բավականաչափ փորձված չեյին, իսկ կոլտնտեսութեաններին մեջ սողոսկած կուլակային տարրերը և կոլտնտեսական ցուցանակի տակ թագնված սպիտակ գվարդիական թափթփուկներն ամեն կերպ աշխատում էին կոլտնտեսութեաններին զարգացումն ուղղել կեղծ ճանապարհով:

Հին կոլտնտեսականները, և վոչ միայն կոլտնտեսականները, այլ այն ժամանակվա նախկին չքավորները և միջակ անհատականները լավ հիշում են, թե ինչպես կառավարութեանը և կուսակցութեանն ամբողջ ժամանակ ոգնում էին կազմակերպելու և կարգավորելու կոլտնտեսութեաններին աշխատանքը: Բացի այդ, կոլտնտեսութեաններին ոգնում էին և տալիս էին զանազան արտոնութեաններ հարկերի, սպահովագրման, լավագույն հողեր հատկացնելու վերաբերյալ և այլն: Յե՛վ անա այդ արտոնութեաններին առաջին հերթին հենց կպան կոլտնտեսականներին մեջ սողոսկած կուլակները: Կոլտնտեսութեան որինական կարգի պատրվակով նրանք խորամանկորեն յուրացնում էին վոչ միայն վարկերն ու արտոնութեանները, այլև կոլտնտեսականների հասարակական գույքը և դրանով քայքայում էին կոլտնտեսութեանը: Որինակ. Ախտանի-զովսկի կոլտնտեսութեան մեջ (Տեմրյուկսկի ռայոնում) արդեն 1930 թվին «աշխատավարձը» կրկնակի գերազանցում էր կոլտնտեսութեան մեջ ստացված ամբողջ բերքից. կոլտնտեսութեան մեջ սողոսկած կուլակներն իրենց գործակալներին — ծուլերի, կորզիչների միջոցով, իբր թե չքավորութեան պաշտպանութեան համար, բացի «աշխատավարձի» համար բաժանած պետական վարկերից, պահանջում էին վաճառել կոլտնտեսային գույքը՝ կոլտնտեսականների հետ լրիվ հաշիվ տեսնելու համար:

Ներկայումս հազիվ թե գտնվեն բարեխիղճ կոլտնտեսականներ, վորոնք դեռ չեն հասկացել կուլակային մեքենայութեաններն «աշխատավարձի» նկատմամբ կոլտնտեսութեան մեջ: Սահմանելով «աշխատավարձը», կոլտնտեսութեան մեջ սողոսկած կուլակները և նրանց գործակալներն ամեն կերպ ձգտում էին շահվել հասարակական սեփականութեան հաշվին, քայքայել կոլտնտեսութեանները և հենց դրանով ապացուցել, վոր կոլտնտեսական ուղին չքավորութեան և միջակների համար իբր թե անընդունելի յե:

Այժմ, յերբ մերկացված և ջախջախված է կուլակութեան կազմակերպած հակահեղափոխական սաբոտաժը, միայն կոլտնտեսութեան ուղղակի թշնամին կարող է դեռ չհասկանալ, թե

կոլտնտեսութեան մեջ պետական վարկերը և կոլտնտեսական գույքն աշխատավարձի համար ոգտագործելն ըստ էյութեան վոչ այլ ինչ է, յեթե վոչ հենց կոլտնտեսութեան ուղղակի խորտակում: Իսկ կոլտնտեսութեաններում աշխատավարձ սահմանելու ամեն տեսակ խոսակցութեան այլ կերպ չի առաջանում, յեթե վոչ կոլտնտեսութեան մեջ և կոլտնտեսութեան շուրջը թագնված կուլակային տարրերից:

Իսկապես, կարո՞ղ է արդյոք կոլտնտեսութեան մեջ աշխատավարձ լինել, յեթե մինչև անգամ բոլոր կոլտնտեսականները բարեխիղճ աշխատեն:

Կոլտնտեսութեանը — դա կամավոր կերպով միացած գյուղացիների խոշոր կոլեկտիվ տնտեսութեան է: Կոլտնտեսութեան կոլեկտիվ տերը հանդիսանում են կոլտնտեսականները, վորոնց միջոցներով և աշխատանքով կազմակերպված է կոլտնտեսութեանը:

Կոլտնտեսութեանը տարբերվում է խորհրդայնութեանից. գործարանից, ֆաբրիկայից նրանով, վոր կոլտնտեսութեան մեջ արտադրութեան բոլոր միջոցները և կոլեկտիվ տնտեսութեան բոլոր արդյունքներն ամբողջովին պատկանում են ավյալ կոլտնտեսութեան կոլտնտեսականներին: Իսկ ֆաբրիկաները, գործարանները, խորհրդայնութեանները կազմակերպված են բանվոր-գյուղացիական պետութեան միջոցներով, հեռաբար և նրանց աշխատանքի արդյունքներն ամբողջովին պատկանում են պետութեանը:

Բացի իր կոլեկտիվ արտադրութեան յեկամուտներից, կոլտնտեսութեանն ուրիշ վոչ մի միջոց չունի, հենց դրա համար էլ իր կոլտնտեսականների աշխատանքի վնասը կարող է կասարել միայն այդ յեկամուտների համաձայն:

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎԱՄՈՒՏՆԵՐԸ ԲԱՇԽԵԼ ՄԻԱՅՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՇԽԱՏԱՆԻ ԳԱՆԱԿԻ ՅԵՎ ՎՈՐԱԿԻ ԿԱՄԱՁԱՅՆ

Դեռ այժմ էլ հաճախ կարելի յե գտնել այնպիսի կոլտնտեսութեաններ, վորտեղ չի կարգավորված յեկամուտների ճիշտ բաշխումը: Վերցնենք, որինակ, Պրոլետարական ռայոնի «Լեներյան արշալույս» կոլտնտեսութեանը: Այդ կոլտնտեսութեան մեջ մտածել են կոլտնտեսական Լեուս Ֆիլիպպին նրա աշխատած 510 աշխորի համար տալ 925 կիլոգրամ, վորով ամեն մի աշխորին համարում է 1 կիլոգրամ 814 գրամ հաց, իսկ կոլտնտեսական Ֆիլիպին, վոր վաստակել է ընդամենը 354 աշխոր,

տալ 1442 կիրովգրամ կամ ամեն մի աշխարհին 4 կիրովգրամ: Աշխարհի համար այդպես անհավասար են ստացել և ուրիշ կոլտնտեսականներ: Հարց ե առաջանում—այն կոլտնտեսականը, վոր իր աշխարհի համապատասխան չափով յեկամուտ չի ստանում, կարող ե արդյոք հետագայում բարեխղճորեն վերաբերվել աշխատանքին: Յերևում ե, վոր վոչ կոլեկտիվ աշխատանքի յերկարամյա փորձը, վոչ կուսակցության և կառավարության պահանջները վոչինչ չսովորեցրին «Լենինյան արշալույս» կոլտնտեսության ղեկավարներին, իսկ ավելի շուտ ղեկավարության մեջ ղեռ նստած են կուլակային մնացորդներ:

Ինչպես սովորեցրել են մեզ Մարքսն ու Լենինը, յեկամուտների միակ ճիշտ, սոցիալիստական բաշխումը հանդիսանում ե հետևյալը—հավասար աշխատանքի համար մթերքների հավասար քանակ. ով չի աշխատում, նա վոչինչ չի ստանում: Դա նշանակում ե, վոր կոլտնտեսային յեկամուտը կոլտնտեսականների միջև պետք ե խստորեն բաշխել:

ԱՇԽԱՏԱՆԻ ՎՈՐՊԵՍ ԱՇԽԱՏԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ծնունդ առած առաջին կոմունա-կոլտնտեսությունների կոլտնտեսականները մինչև անգամ հասկանում եյին, վոր նրանց կոլեկտիվ յեկամուտները պետք ե բաշխվեն գործադրած աշխատանքի քանակի և վորակի համաձայն: Բայց չունենալով Մարքսի ու Լենինի ուսմունքի փորձն ու գիտելիքները, նրանց մեծամասնությունը յեկամուտների բաշխումն անց եր կացնում աշխատած որերի քանակի համաձայն, յեթե չհաշվենք այն կոլտնտեսությունները, վորոնք բաշխում եյին յեկամուտները դասակարգային թշնամուցուցումով, ըստ սպառողների, տնտեսությունները, համայնացրած գույքի:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր սխալ ե յեկամուտների բաշխել ըստ աշխատած բանվորական որերի, քանի վոր այսպիսի բաշխման ղեպքում թե պատանին, թե փորձված կոլտնտեսականը մի որվա աշխատանքի համար ստանում են միաչափ: Դրա համար ել կորչում ե ծանր աշխատանքի վրա աշխատելու և իր մասնագիտությունը բարձրացնելու ամեն մի իմաստ: Բացի այդ, յեկամուտների բաշխումն որերի համաձայն թույլ ե տալիս ծուլին, կորզիչին, վոչինչ չանելով ստանալ ախրան, վորքան և բարեխիղճ կոլտնտեսականը:

Բաշխման այդպիսի կարգն արմատից քանդում եր աշխատանքային կարգապահությունը, վոչ վոք շահագրգռված չեք ավելի լավ և շատ անել, իսկ դասակարգային թշնամին ոգտվում եր դրանից, վորպեսզի ապացուցեր կոլտնտեսականների առաջավոր մասին, թե կոլտնտեսության մեջ անհնար ե աշխատել:

Դրա համար անհրաժեշտ զգացվեց սահմանել աշխատանքի հաշվառման այնպիսի պայմանական միավոր, վորը չափեր և գնահատեր վոչ միայն կոլտնտեսականի կատարած այս կամ այն աշխատանքի քանակը, այլև այդ աշխատանքի վորակը, իսկ միևնույն ժամանակ վորոշեր կոլտնտեսականի բաժինը կոլտնտեսային յեկամուտում: Աշխատելով կոլտնտեսային արտադրության մեջ, կոլտնտեսականն ամեն որ պիտի իմանա, թե ինչքան բաժին ե ստանում կոլտնտեսային յեկամուտում իր կատարած աշխատանքի համար: Միայն այդ ղեպքում նա ուղղակի շահագրգռված կլինի ավելի շատ և լավ անել:

Շատ կոլտնտեսություններ, կիրառելով Մարքսի ու Լենինի ցուցումները սոցիալիստական հասարակության մեջ յեկամուտները բաշխելու մասին, կարողացան ճիշտ լուծել այդ խնդիրը: Կոլտնտեսային յեկամուտներն ըստ գործադրած աշխատանքի քանակի ու վորակի ճիշտ վորորոշելու համար, մի քանի կոլտնտեսություններ իրենց պրակտիկայում բոլոր աշխատանքները գնահատում եյին, այսպես կոչված «աշխատանքային միավորներով» («աշխատանքային միավորներով»), իսկ մյուսները—«աշխատանքայինորերով» կամ «աշխարհերով»: Այդ տարբեր անունների մեջ դրված ե միևնույն կանոնը—հաշվել կոլտնտեսականների աշխատանքն ըստկատարած աշխատանքի քանակի և վորակի:

Կուսակցությունը և կառավարությունը 1930 թվին ԽՍՀՄ-ի բոլոր կոլտնտեսությունների համար որերնքի ուժ տվին «աշխարհին», վորպես աշխատանքի չափի և գնահատման միավոր:

Ինչո՞վ ե տարբերվում աշխարհը բանվորական որից:

Բանվորական որի քանակը կարող ե միայն ցույց տալ, վոր այսինչ կոլտնտեսականն այսքան որ մասնակցել ե աշխատանքին, բայց այդ ցուցանիշն ել լրիվ չի լինի, քանի վոր մեկը կարող ե ավելի վաղ դուրս գալ աշխատանքի և ավելի ուշ հեռանալ, իսկ մյուսը—ընդհակառակը: Իսկ կատարած աշխատանքի քանակի և վորակի հաշվառման մասին այդպիսի կարգի ղեպքում խոսք անգամ չի լինի, քանի վոր կարելի յե մասնակցել աշխատանքին, բայց վոչինչ չանել կամ քիչ և վատ անել:

Բոլորովին ուրիշ բան ե, յերբ կոլտնտեսականների աշխատանքը հաշվի յե առնվում աշխարհերով: Աշխարհը միաժամանակ

հանդիսանում է աշխատանքի քանակի ու վորակի չափողն ու գնահատականը: Աշխորը կարելի յե հատկացնել միայն կատարված, նախորոք գնահատված աշխատանքի համար, հաշվի առնելով, թե գործի համար ինչքան աշխատանք պետք է գործադրել և ինչպիսի աշխատանք է լինելու այդ, թեթեւ, թե ծանր, հասարակ, թե վարժություն, փորձառություն, ունակություն կամ մինչև անգամ հատուկ նախապատրաստություն պահանջող: Բոլոր կոլտնտեսականների աշխատած աշխորերի քանակի համաձայն բաշխվում են և կոլտնտեսային յեկամուտները: Հետևաբար, աշխորը միաժամանակ հանդիսանում է կոլտնտեսականների միջև բաշխվելիք յեկամտի բաժին. ինչքան շատ աշխորեր վաստակի կոլտնտեսականը, այնքան շատ մթերք և փող կստանա այդ յեկամտից:

Կոլտնտեսականները աշխատանքի ճիշտ հաշվառումն ըստ վաստակած աշխորերի քանակի Ֆիզիկապես կատարած աշխատանքի համար, հնարավորություն կտա իրագործել կոլտնտեսություններում սոցիալիստական կանոնը—հավասար աշխատանքի համար մթերքների հավասար քանակություն, ով չի աշխատում, նա վոչինչ չի ստանում:

ԻՆՉՊԵՍ ԳՆԱՀԱՏԵԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՇԽՈՐԵՐՈՎ

Ասածներից արդեն յերևում է, վոր կարելի յե ճիշտ բաշխել կոլտնտեսային յեկամուտը գործադրված աշխատանքի քանակի և վորակի համաձայն: Բայց դրա համար հարկավոր է ճիշտ հաշվառել բոլոր կոլտնտեսականների աշխատանքը: Իսկ վորպեսզի ճիշտ հաշվի առնվի աշխատանքը, հարկավոր է ճիշտ գնահատել բոլոր աշխատանքներն աշխորերով և հաշվի առնել վոչ միայն այն, թե կոլտնտեսականն ինչքան վարեց, քաղհանեց, կալեց, և ինչ վորակի յե աշխատանքը, այլև ինչքան աշխորեր վաստակեց: Աշխատանքը պետք է ճիշտ հաշվառել—յերք է ինչ է արել, ինչպես է աշխատանքի վորակը և ինչքան է արել, վորպեսզի ամեն ժամանակ կարելի լինի ստուգել, թե ճիշտ են հատկացրված ու գրված աշխորերը: Յեթե կատարված աշխատանքը հաշվի չառնվի և չգրվի ցուցակում, կարող է աշխորերի պրությունը չարաչահելու ամեն դեպք լինել, իսկ ստուգել չի կարելի: Յերք հայտնի լինի, թե ամեն մի կոլտնտեսական քանի աշխոր վաստակեց, դժվար չի և յեկամուտը բաշխել՝ բոլոր կոլտնտեսականների վաստակած աշխորերի քանակի համաձայն: Յերք չի կարելի այլ կերպ բաշխել յեկամուտը:

Բայց ինչպես գնահատել աշխատանքն աշխորերով: Ինչպես, որինակի համար, գնահատել վարի մի հեկտարը: Քանի աշխոր հաշվել կոլտնտեսականի վրա, յեթե նա, ասենք, յերկու խոփանի գութանով վարում է 10 հեկտար փափուկ հող, իսկ մյուսը նույնպես 10 հեկտար ամուր հող, իսկ յերրորդը փոցխում է 10 հեկտար յերկու անգամ և այլն:

Այդ հարցերից միանգամից յերևում է, վոր մի վորե է աշխատանք ճիշտ գնահատելու համար՝ նախ և առաջ պետք է վորոշել, թե կոլտնտեսականը մի որում ինչքան կարող է կատարել այդ աշխատանքը, յեթե նա աշխատի բարեխիղճ, այսինքն՝ պետք է սահմանել աշխատանքի որական նորման: Բոլորին հայտնի յե, վոր ամուր հողերում, հատկապես խոպանում վարել ավելի դժվար է, քան փափուկ հողում, հետևաբար, ինչքան էլ աշխատես, բայց չի կարելի այնքան վարել, վորքան փափուկ հողերում նույն գութանով, նույն քաշող ուժով: Հետևաբար, ամուր հողերում աշխատանքի նորման ավելի պակաս կլինի: Իրա համար էլ աշխատանքի որական նորմաները տարբեր հողերում չեն կարող միատեսակ լինել: Աշխատանքի որական նորմայի մեծությունը կախված է նաև նրանից, թե ինչպիսի քաշող ուժով և ինչպիսի գործիքներով ու մեքենաներով է կատարված աշխատանքը:

Սակայն բացի նորմայից, աշխատանքն աշխորերով ճիշտ գնահատելու համար հարկավոր է նաև ճիշտ գնահատություն տալ դժվարության և պահանջվող վորակավորման: Ուրիակ, չի կարելի սիւսեսակ գնահատում սալ պահապանի յեվ գութանավարի, փոցխողի յեվ srակորիսի աշխատանքի յեվ այլն: Պահապան կարող է լինել ամեն մի կոլտնտեսական, և պահապանի աշխատանքը դժվար չէ: Յեվ փոցխող էլ կարող է ամեն մեկը լինել, բայց փոցխողը, աշխատանքը բարեխիղճ կատարելու համար 30—35 կիլոմետր պետք է շրջի վարած սեղում: Նույն բանն է և վարողի նկատմամբ, բայց վարողից պահանջվում է նաև ճիշտ ուղղել գութանը, հարմարեցնել լծասարքը, հմուտ կերպով ոգսագործել փառող ուժը: Ել ավելի շատ հմտություն և գիտություն է պահանջվում ցանողից, հակապես շաղպան գերավաղ ցանքի ժամանակ, արակտորիստից և մյուսներից:

Բացի այդ, հարկավոր է հաշվի առնել և աշխատանքի պայմանները: Բոլոր ծանր և փորձառություն ու գիտություն պահանջող աշխատանքները պետք է ավելի բարձր գնահատվեն՝ թեթև ու վորակավորում չպահանջող աշխատանքների համեմա-

տությամբ: Իսկ սեզոնային և հատկապես կարեւոր աշխատանքները պետք է ավելի բարձր գնահատվեն, քան նույն դժվարություններն ունեցող և վորակավորում պահանջող աշխատանքները, վորոնք կարելի չէ կատարել անկախ սեզոնից ու յեղանակից և այլն:

ԽՈՋՄ-ի բոլոր կոլտնտեսությունների համար վորպես պարտադիր կանոն, կառավարությունը բաժանել է աշխատանքները 7 խմբի ըստ նրանց դժվարության, պահանջվող վորակավորման, սեզոնականության և նշանակության: Աշխատանքների ամենամեծ գնահատումը—յոթերորդ խումբն է: Այդ խմբի աշխատանքների որակն նորման գնահատվում է յերկու աշխոր: Այդ խմբի մեջ մտնում են հատկապես դժվար և գիտություն պահանջող աշխատանքները, բացի տրակտորիստներից:

Տրակտորիստների աշխատանքը, վորպես ամենածանր ու փորձառություն պահանջող աշխատանք, այն էլ առանձնապես կարևոր նշանակություն ունեցող գյուղատնտեսության մեքենացման համար: Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի վորոշումով պետք է գնահատվի առանձին կերպով, յերեք աշխոր աշխատանքի ամեն մի նորմայի համար: Տրակտորիստների աշխատանքի այդպիսի բարձր գնահատումն առաջանում է նյութապես շահագրգռելու և տրակտորների վրա ամենալավ կոլտնտեսականներին ամրացնելու անհրաժեշտությունից:

Ամենից ցածր—աշխատանքների առաջին խումբը գնահատվում է 0,5 աշխոր աշխատանքի որակն նորմայի համար: Այդ խմբին են պատկանում բոլոր թեթև աշխատանքները, վորոնք չեն պահանջում վորակավորում, ինչպես, որինակ. — պահապան տնտեսության ներսում, հավաքարարուհին, թղթատարը և այլն: Ահա Հողփողկոմատի սահմանած աշխատանքների բաժանումն ըստ խմբերի.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՄԲԵՐԸ 1934 ԹՎԻՆ ԱԶՈՎ-ՍԵՎՇՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՅՈՒՐՈՂ խումբ—աշխատանքի որակն նորմայի գնահատումը յերկու աշխոր

1. Խուրճկապիչի մեքենավարը.
2. Գերավաղ շաղացանի ցանողը.
3. Բարդ կալսիչի մեքենավարը.
4. Մեծ կոլտնտեսության նախագահը:

ՎԵՅԵՐՈՂ խումբ—աշխատանքի որակն նորմայի գնահատումը 1,75 աշխոր

1. Վարողը.
2. Շարքացանի ցանողը.
3. Ձիաքաշ կալսիչի մեքենավարը.
4. Հնձիչից վեր անողը.
5. Դեզեր սարքողը.
6. Բարդ կալսիչին խուրճ տվողը.
7. Շաքարի ճակնդեղը ստուգողները.
8. Շաքարի ճակնդեղը փորողը.
9. Շաքարի ճակնդեղը կրողը.
10. Ծխախոտը հավաքողները և շարոգները.
11. Փոքր կոլխողի նախագահը.
12. Մասնագիտական կրթություն ունեցող հաշվապահը:

ՀԻՆՂԵՐՈՂ խումբ—աշխատանքի որակն նորմայի գնահատումը 1,5 աշխոր

1. Խուրճ կապողը.
2. կալսիչի մոտ յեղած կշռարարը.
3. Բամբակի հավաքումը ձեռքով.
4. Շարատունկ-տեխնիկական մշակույթների և յեզիպտացուրենի միջարքային մշակման աշխատողները.
5. Վորակավորված հաշվետարը, վոր աշխատում է ավելի, քան մի տարի.
6. Անասնապահական ֆերմայի վարիչը, վոր աշխատում է ավելի քան մի տարի.
7. Բրեզգադիրը, վոր աշխատում է ավելի, քան մի տարի:

ՉՈՐՈՂ խումբ—աշխատանքի որակն նորմայի գնահատումը 1,25 աշխոր

1. Դաշտային աշխատանքների ժամանակ հացահատիկ և սերմացու կրողը.
2. կարտոֆիլ փորողը.
3. Բանջարանոցային միջարք. բույսերի մշակումը ձեռքով.
4. Առաջին տարին աշխատող բրիգադիրը.
5. Կոլտնտեսության մեջ առաջին տարին աշխատող հաշվետարը.

6. Անասնապահական ֆերմայի վարիչը, վոր աշխատում է առաջին տարին.

7. Ջիապանը, վորն աշխատում է ավելի քան մի տարի:

8. Ավագ հովիվը.

9. Ավագ խոզապահը.

10. Ավագ խաշնարածը:

Յերրորդ խումբ—աշխատանքի որական նորմայի գնահատումը մի աշխուր

1. Մնացած դաշտային աշխատանքներում աշխատողները:
2. Չմեռ ժամանակ բեռներ կրողը, վորը բարձում է և դատարկում.

3. Բանջարեղեն ու պտուղներ հավաքողները.

4. Հացի և ցանքի պահպանը.

5. Առաջին տարին աշխատող ձիապանը

6. Ավագ թռչնապահը.

7. Ավագ կթողը և յերկրորդ տարին կթողը.

8. Խաշնարածը.

9. Խոզարածը.

10. Հովիվը:

Յեկրորդ խումբ—աշխատանքի որական նորմայի գնահատումը 0.75 աշխուր

1. Առաջին տարին աշխատող կթողը.

2. Թռչնապահը.

3. Անասնապահը.

4. Բրիգադային խոհարարը:

Առաջին խումբ—աշխատանքի որական նորմայի գնահատումը կես աշխուր

1. Տնտեսութեան ներսում մյուս մշտական անվորակ աշխատանքների վրա աշխատողները.

2. Պահապանը տնտեսութեան ներսում.

3. Հավաքարարուհին.

4. Թղթատարը:

Մնացած բոլոր աշխատանքները, վորոնք չեն մտած այդ խմբերի մեջ, պետք է խմբերի բաժանվեն կոլտնտեսութեանն:

րում, հաշվի առնելով աշխատանքի դժվարութեանը, պահանջվող վորակավորումը, շտապողականութեանը և կարևորութեանը: Այդ կոլտնտեսութեաններում, վորտեղ անասնապահութեանը հանդիսանում է ավելի հիմնական և գլխավոր տնտեսութեանը, անասնապահութեան աշխատողները մի կարգ բարձր են դատվում:

Յեթե մենք դիտենք, թե աշխատանքը վոր խմբին է հատկացված, ինչպես է այդ խմբի նորմայի գնահատումը և կոլտնտեսականը մի որում ինչքան աշխատանք կարող է կատարել (աշխատանքի ինչ նորմա յե սահմանված), այն ժամանակ արդեն դժվար չի և գնահատել աշխատանքն աշխորերով: Որինակ, վերջնենք գուլթանավարի աշխատանքը, վորը պատկանում է վեցերորդ խմբին. աշխատանքի նորմայի գնահատումը 1,75 (կամ $1\frac{3}{4}$) աշխոր է, իսկ յերկու խոփանի ձիաքարը գուլթանի աշխատանքի նորման փափուկ հողերում սահմանել են 1,25 հեկտար (մեկ և մի քառորդ): Իմանալու համար, թե գուլթանավար կոլտնտեսականին այդ նորմայով ինչքան աշխոր պետք է հատկացնել աշխատանքի միավորի, այն է՝ մի հեկտարի համար, հարկավոր է 1,75 աշխորը (գուլթանավարի որական գնահատումը) բաժանել 1,25 հեկտարի վրա (աշխատանքի որական նորմայի վրա): Այդ դեպքում մի հեկտար վարի համար գուլթանավարին պետք է հատկացնել 1,40 աշխոր ($1,75 : 1,25$), 2 հեկտարի համար 2,80 աշխոր ($1,4 \times 2$) և այլն:

Կոլտնտեսականների համար այդ հաշիվների ամբողջ դժվարութեանը այն է միայն, վոր պետք է սովորել ճիշտ հաշվել: Միայն են վարվում այն կոլտնտեսականները, վորոնք աշխատանքի գնահատման և հաշվառման ճշտութեանն ամբողջովին վստահանում են հաշվարարներին: Հաշվարարները կարող են սխալվել, իսկ յեթե հաշվետարը յեղել է դատակարգային թշնամին, այն դեպքում գիտակցորեն վրասարարութեան կանի: Իրա համար աշխատանքի հաշվառման ճշտութեան վրա մշտական հրակելու յեն նախ և առաջ իրենք՝ կոլտնտեսականները:

Շատ կոլտնտեսութեաններում այնպիսի կարգ եր սահմանված, վորի համաձայն կոլտնտեսականներին աշխորեր եյին հատկացնում առանց հաշվի առնելու վորևե աշխատանքի նորմա: Ասենք, գուլթանավարի համար որական գնահատումը սահմանում եյին 1,75 աշխոր մի որում, բայց աշխատանքի նորման չեյին սահմանում և ստացվում եր գուլտ որավարձ, վորի մասին նախկին Հողօրոկում ընկեր Յակովլևն ասում եր խորհրդների 6-րդ համագումարում.

«Որպիւրձի ժամանակ կոլտնտեսականը վեր է կենում առաւելոյան ժամը ութին դաշտային աշխատանքների ամենասուր շրջանում: Դրանից հետո նա ժամերով պայմանավորվում է հարեվանի հետ, ձի յե վորոնում, գուլթան է վորոնում, քաշ է գալիս ձիասարքերի հետ, վորորում է յերկաթալարը և այնպես է լինում, վոր պատրաստ է դուրս գալ այն ժամանակ, յերբ հին միջակ գյուղացու սովորութեան համաձայն, արդեն պետք էր ճաշել:»

1—2 ժամով աշխատանքի յեկած մարդու համար նույնպես գրվում էր աշխոր: Մարդը գալիս էր կոլտնտեսութեան վարչութեան, ամբողջ որը ցցվում էր այնտեղ, նրա համար նույնպես գրվում էր աշխոր:»

Այդպիսի վերաբերմունք դեպի աշխատանքը միայն նրա համար էր, վոր աշխորերը գրվում էին վոչ թե աշխատանքի համար, այլ դրա համար, վոր կոլտնտեսականը ներկա էր լինում աշխատանքին: Աշխորի հատկացման այդպիսի կարգն, առանց հաշվի առնելու կատարած աշխատանքը, հնարավորութեան էր տալիս կորգիչին կամ ծուլլին, չաշխատելով կամ քիչ և վատ ախատելով, այնքան աշխորեր ստանալ, հետևաբար նաև յեկամուտ, ինչքան ստանում էր բարեխիղճ կոլտնտեսականը:

ՅՈՒՐԱԶԱՆԶՅՈՒՐ ԿՈՆՏՆԵՍԱԿԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐՆ Ե—ԿԱՏԱՐԵԼ ԱՐՏԱԳՐԱՆՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ, ՎՈՐԱԿԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ ՏԱԼՈՎ ՀԱՆԴԵՐԸ

Ինչպես արդեն ասացինք, առանց արտադրանքի նորմաների չի կարելի ճիշտ գնահատել աշխատանքն աշխորերով, հետևաբար և չի կարելի ճիշտ հաշվել կոլտնտեսականների աշխատանքը և ճիշտ բաշխել կոլտնտեսային յեկամուտները: Առանց արտադրանքի նորմաների ծուլլը և կորգիչը անարդարացիորեն ստանում են ավելի աշխորեր, իսկ բարեխիղճ, ազնվաբար աշխատող կոլտնտեսականը մշտական ավելի քիչ աշխորեր է ստանում, քան նա իսկապես վաստակել է: Չի կարելի ճիշտ հաշվել կոլտնտեսականների կատարած աշխատանքը, յեթե արտադրանքի նորմաները սխալ սահմանվեն, այսինքն՝ չափից ավելի ցածր կամ չափից ավելի բարձր: Որինակի համար, «Ոկոյաբը» կոլտնտեսութեան մեջ (կորենովսկի ռայոն) յեղել է այնպիսի մի դեպք, յերբ այդի տնկելու համար փոս փորողները մինչև ճաշը յերկու անգամով գերակատարել են նորմաները և շատ գոհ տրամադրութեամբ տներն են գնացել, վորովհետև այդ գործի

համար նրանց վրա հաշվված էր յերեքական աշխոր: Իսկ «Պուսկ սոցիալիզմում» կոլտնտեսութեան մեջ (Մատվենո-կուրգանենսկի ռայոնի) հացահատիկ մաքրողները, ամեն կերպ ջանալով հանդերձ, ամբողջ որվա ընթացքում վաստակեցին 10—15 հարյուրերորդական աշխոր:

Թե ինչպես է անդրադառնում այսպիսի նորմավորումն աշխատանքի վրա, աշխատանքի արտադրողականութեան վրա, դրա մասին բոլորը գիտեն: յերբ արտադրանքի նորմաները ցածր են լինում, բոլոր կոլտնտեսականները վագում են այս աշխատանքի հետևից և, ընդհանակառակը, յերբ այդ նորմաները անհամեմատ բարձր են, բոլորն աշխատում են գանազան կեղծիքներով խուսափել այդ աշխատանքներից: Թե առաջին և թե վերջին դեպքում էլ կոլտնտեսութեանը վրաս է հասնում միայն: Իսկ այս բանն առաջանում է նրանից, վոր աշխատանքի նորմաները կազմվում են գրասենյակներում, իսկ կոլտնտեսականները հետինչպես պետք է չեն քննարկվում:

Արտադրանքի նորմաները հարկավոր են նաև նրա վորպեսզի ճիշտ կազմվեն կոլտնտեսութեանների և բրիգադների արտադրական և աշխատանքային պլանները, ճիշտ դասավորվեն կոլտնտեսականների աշխատանքներում: Չե վոր, յեթե արտադրանքի նորմաները չլինեն, կամ յեթե նրանք սխալ են կազմված, ապա կարող է այնպես պատահել, վոր այնտեղ, ուր 10 մարդ է հարկավոր աշխատանքը ժամանակին կատարելու համար, ուղարկվեն միայն հինգ մարդ, վորոնք ամենայն հավանակութեամբ չեն կարողանում կատարել ամբողջ աշխատանքը, և ընդհակառակը: Իսկ կոլտնտեսութեանների աշխատանքում այսպիսի դեպքեր շատ են պատահում: Առանց արտադրանքի ճիշտ նորմաների՝ վոչ բրիգադիչը և վոչ էլ կոլտնտեսութեան նախագահը չեն կարող ճիշտ ղեկավարել աշխատանքը: Այդ իսկ պաճառով ճիշտ է նկատել նախկին Հողժողկոմ ընկ. Յակովլևը, վոր առանց արտադրանքի նորմաների չի կարող լինել կոլտնտեսութեան, վորպես խոշոր տնտեսութեան: Այս գլխի վերջում մենք կբերենք Ադով-Սեծովյան յերկրամասի կոլտնտեսութեանների համար արտադրանքի մոտավոր նորմաներ (տես հավելված):

Արտադրանքի այդ մոտավոր նորմաների հիման վրա, յուրաքանչյուր կոլտնտեսութեան, նկատի առնելով բարեխիղճորեն աշխատող կոլտնտեսականների աշխատանքը, պետք է մշակի իր կայուն արտադրական նորմաները: Այս դեպքում նա պետք է հաշվի առնի տեղական այն բոլոր պայմանները, վորոնք ազդում են աշխատանքի

19-5/19

ТЕКА
ВУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
И
История Нау
СР



ները, հողի ազատավաճառութիւնը, քաշող ուժի դրոււթիւնը, ինչպիսի գործիքներով և մեքենաներով և կատարվելու աշխատանքը և այլն:

Կոլտնտեսութեան մեջ ընդունված արտադրանքի նորմաներն անպայման պետք է կատարվեն բոլոր կոլտնտեսականներին կողմից, այլապես կոլտնտեսութեան մեջ միտք չունի վորևէ պլանավորում, վորևէ դեկավարութիւն: Յենթադրենք թէ կոլտնտեսականներին մի վորևէ մասը որեցոր չի կատարում կոլտնտեսութեան կողմից ընդունված արտադրանքի նորմաները. դրանից աշխատանքը ձգձգվում է և պահանջում է լրացուցիչ աշխատանքի վատնում, չխոսելով արդեն վորակի իջեցման և բերքի կորստի ավելանալու մասին: Միթէ բարեխիղճ կոլտնտեսականները կարող են հաշտվել այդպիսի դրոււթեան հետ, յերբ առանձին ծուլերի և դատարկապորտների՝ դեպի կոլտնտեսային աշխատանքը հայտաբերած անփութ և անբարեխիղճ վերաբերմունքի պատճառով վնասովի վորջ կոլտնտեսութիւնը, ինչպես նաև այն կոլտնտեսականները, վորոնք մշտական, առանց ձեռները ծալելու, ազնվաբար աշխատում են կոլտնտեսութեան մեջ: Արտադրանքի նորմաների թերակատարման, ինչպես նաև աշխատանքի դուրս չգալու հետ վոր մի կերպ չի կարելի հաշտվել. նորմաների թերակատարումը հավասար է գործալքման: Այն կոլտնտեսականները, վորոնք դեռ չեն հասկացել իրենց պարտականութիւնները՝ աշխատանքին կանոնավոր կերպով դուրս գալու և արտադրանքի նորմաները կատարելու ասպարեզում, այդպիսիներին հարկավոր է բացատրել և համոզել, իսկ նրանք, ովքեր հասկացել են, սակայն չեն ուզում կատարել, այդպիսիների վերաբերմամբ պետք է խստիվ գործադրել որենքը, վորի մեջ ասված է. «Այն դեպքում, յերբ կոլտնտեսութեան անդամն անհարգելի պատճառով հրաժարվում է կատարել կոլտնտեսութեան կողմից իրեն հաճնարարված աշխատանքը, կոլտնտեսութեան վարչութիւնը պարտավոր է տուգանել նրան մինչև 5 աշխորի չափ՝ իսկ յերկրորդ անգամ հրաժարվելիս—վտարել նրան կոլտնտեսութիւնից» (ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի 1933 թվականի հունվարի 30-ի վորոշումը): Այժմ արդեն վոր մի կերպ չի կարելի թուլ տալ ծուլերին և դատարկապորտներին վիժեցնել կոլտնտեսութեան աշխատանքը:

ՀԱՆՈՒՆ 250—300 ԱՇԽՈՐԵՐԻ

Այսպիսի խնդիր դրեց կոլտնտեսականներին առաջ Ազով-Սև-ծովյան առաջին կուսկոնֆերանսը, վորպեսզի յուրաքանչյուր

աշխատունակ կոլտնտեսականին 1934 թվականին ընկնի վոր պակաս, քան 250—300 աշխոր:

Ինչ է նշանակում այս խնդիրը:

Կոլտնտեսութիւնների համար այս խնդիրը նշանակում է բարձրացնել աշխատանքի արտադրողականութիւնը, ամրացնել աշխատանքային կարգապահութիւնը, ճիշտ ոգտագործել բոլոր կոլտնտեսականների աշխատանքը: Կատարելով այս խնդիրը, կոլտնտեսութիւնը կկարողանա ապահովել բոլոր գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին և բարձրորակ կատարումը, հետևաբար և բարձր բերքատվութիւնը և յեկամտաբերութիւնը, կկարողանա ուժեղացնել կոլտնտեսութեան կազմակերպչական և տնտեսական ամրութիւնը:

Կոլտնտեսականների համար այդ խնդիրը նշանակում է ստեղծել կուլտուրական և ունևոր կյանք—լուսավոր, մաքուր բնակարաններ, գրքեր, թերթեր, ռադիո, կինո, էլեկտրականութիւն, բոլոր տեսակի մթերքների և արդյունաբերական ապրանքների առատութիւն և այլն: Ահա մի խնդիր, վորի համար իսկպատվոր պետք է պայքարել, և վորը պետք է կատարել ինչ էլ վոր լինի:

Արդյոք հնարավոր է կիրառել այս խնդիրը:

Կոլտնտեսութիւնների աշխատանքի պրակտիկան լիովին հաստատում է, վոր այս խնդիրը միանգամայն կիրառելի յե: Չե վոր 1933 թվականին յերկրամասում միջին հաշվով յուրաքանչյուր կոլտնտեսական վաստակել է 200 աշխոր, չնայած նրան, վոր կոլտնտեսականների մեկ յերրորդ մասը 150 աշխորից պակաս է աշխատել:

Ինչպես անել այդ:

Նախ՝ հարկավոր է բոլոր կոլտնտեսականներին և կոլտնտեսուհիներին լայնորեն բացատրել արտադրական խնդիրները և ամեն կերպ աշխատել, վորպեսզի նրանցից յուրաքանչյուրը բարեխիղճորեն աշխատի կոլտնտեսութեան մեջ ամբողջ տարվա ընթացքում: Հարկավոր է, վորպեսզի սոցմրցումը և հարվածայնութիւնը դառնա բոլոր կոլտնտեսականների աշխատանքի մեթոդը:

Յերկրորդ՝ աշխատանքի հենց առաջին որվանից ամեն կերպ աշխատել, վոր ամեն մի կոլտնտեսական պարզ և հստակորեն գիտենա, թէ ինքը վորտեղ է աշխատում և ինչքան է պահանջվում իրենից կատարել որական, աշխատանքների ժամանակաշրջանի և ամբողջ տարվա ընթացքում:

Յերրորդ՝ յերբ կոլտնտեսութեան մեջ սեզոնային աշխատանքները չեն բավականացնում, վորպիսին հաճախ է պատա-

հում, մանավանդ ձմեռային ամիսներին, հարկավոր է կազմակերպել տնայնագործական իրեր արտադրելու, ձանապարհները, կամուրջները կարգի բերելու, պտղատու այգիներ և անտառներ տնկելու գործը և այլն:

Զորքորդ՝ բոլոր կոլտնտեսականների համար սահմանել ուժեղ աշխատանքային կարգապահութիւն, պահանջելով, վոր բոլորն անպայման մասնակցեն աշխատանքին, կատարեն արտադրանքի նորմաները և տան աշխատանքի բարձր վորակ: Կոլտնտեսային արտադրութիւնը վիժեցնողների նկատմամբ գործադրել բոլոր միջոցները, նախ և առաջ, անդասակարգ սոցիալիստական հասարակարգի կառուցման խնդիրները համբերատարութեամբ և հասկանալի կերպով կատարելու միջոցով վերագաստիարակել յերեկվա մանր սեփականատերերին, դարձնելով նրանց սոցիալիզմի իսկական կառուցողներ, իսկ անուղղելիների նկատմամբ կիրառել ներգործութեան ամենախիստ միջոցները—հասարակական կշտամբանք, աշխորերի իջեցում՝ աշխատանքի վատ վորակի, աշխատանքի դուրս չգալու, աշխատանքը ժամանակին չկատարելու համար, կանգ չառնելով նույնիսկ այնպիսի միջոցի առաջ, ինչպիսին է անուղղելիների վտարումը կոլտնտեսութիւնից:

ՉՈՒՅՆԵԼ ԱՇԽՈՐԵՐԸ

Աշխորերի բարձր արտադրանքը հարկավոր է թէ կոլտնտեսութեանը և թէ կոլտնտեսականներին, վորովհետև նա ամբացնում է կոլտնտեսութիւնը և ստեղծում է այն բոլոր անհրաժեշտ պայմանները, վորոնք իսկապես բոլոր կոլտնտեսականներին դարձնում են ունևոր: Աշխորերի բարձր արտադրանքը պետք է ստացվի բարձր արտադրողականութեան և անխտիր բոլոր կոլտնտեսականների աշխատանքի ճիշտ ոգտագործման հետևանքով:

Սակայն ունեն է հարկավոր աշխորերի այնպիսի բարձր արտադրանք, ինչպես «Կրասնիյ Ոկտյաբը» կոլտնտեսութիւնում (Սլավյանսկի ռայոն), վորտեղ 1932 թվականին վաստակած աշխորերի մեկ հինգերորդ մասը հաշվված է անարտադրողական աշխատանքների համար, այսինքն՝ վարչական կազմի և սպասարկման աշխատանքի համար: Բանից դուրս է գալիս, վոր չորս կոլտնտեսականներն աշխատել են, իսկ հինգերորդը կամ զեկավարել է կամ սպասարկել է նրանց: Դրա համար էլ գարմանալի չէ, վոր այս կոլտնտեսութիւնում մի աշխորին ընկալ ընդամենը 1,7 կիլո հատիկ՝ բոլոր մշակույթները միասին հաշված:

Սակայն և ուրիշ կոլտնտեսութիւններում էլ կան զեռ այն պիսի կոլտնտեսականներ և նույնիսկ առանձին զեկավարներ, վորոնք կարծում են, թէ աշխորերը փող չեն, նրանք համրված չենդրա համար էլ նրանց կարելի յե ծախսել առանց վորևէ հաշվի, և հսկողութեան: Այսպիսի կոլտնտեսականները և զեկավարները կատարում են դասակարգային թշնամու ուղղակի ցուցմունքը: Նրանք վիժեցնում են արտադրական կարգապահութիւնը: Աշխորերի շուրջում վոչ վորքի չի թույլատրված: Իսկ յեթե վորևէ մեկը թույլ է տալիս կամ կատարում է շուրջում, դրան թիստ պատասխանատվութեան պետք է յենթարկել:

Յուրաքանչյուր կոլտնտեսութեան մեջ պետք է հաստատել այնպիսի կարգ, վոր աշխորը հաշվելու և զրանցելու գործի ճիշտ լինելն անպայման ստուգվի, այն էլ վոչ թէ տարվա վերջում, այլ և ամեն որ: Իրենք՝ կոլտնտեսականները մշտական պետք է հետևեն աշխորերի հաշվառման ճիշտ լինելուն և վոչ վորքի թույլ չտան ծախսելու աշխորերն առանց գործի:

Կառավարութիւնը վորոշել է, վոր վարչական և սպասարկող անձնակազմին հասնելիք աշխորերի քանակը կոլտնտեսութեան վաստակած ամբողջ աշխորերի քանակի 8 տոկոսից ավել չպետք է լինի: Այս որենքը պետք է կատարել, ինչ էլ վոր լինի: Ամեն կերպ պետք է աշխատել, վորպեսզի վարչական և սպասարկման գործում քիչ մարդիկ լինեն, վորպեսզի բոլորն աշխատեն անմիջապես արտադրութեան մեջ, բացի ամենաանհրաժեշտ թվով ազատված անձնավորութիւններից:

ԻՆՉՊԵՍ ՀԱՇՎԵԼ ԱՇԽՈՐԵՐԸ

Լենինը քանիցս ասել է. «Հաշվառքը և հսկողութիւնը աշխատանքի քանակի և մթերքների բաշխման վրա—սրանումն է սոցիալիստական կերպարանափոխութեան ելութիւնը: Սոցիալիզմը—դա հաշվառք է»: Առանց կոլտնտեսականների աշխատանքի ճիշտ հաշվառման, չի կարելի ճիշտ բաշխել կոլտնտեսային յեկամուտները:

Այն կոլտնտեսութիւններում, վորտեղ լավ հիմքերի վրա չի դրված արտադրանքի հաշվառումը և ժամանակին չեն հաշվում աշխորերը կատարված աշխատանքի համար, այնտեղ կոլտնտեսականը վատահ չէ, վոր իր ախատանքը ճիշտ կհաշվեն և վոր նա յեկամտից կատանա այնքան, ինչքան իրեն պետք է հասնի: Կոլտնտեսութեան մեջ հաշվառքն այնպիսի հիմքի վրա պետք է դնել, վոր ամեն որ հաշվվի աշխատանքը և վոչ պակաս, քան

հնգորդյակը մի անգամ կոլտնտեսականի աշխատանքային գրքույկում գրանցվեն նրա վաստակած աշխուրդը: Աշխատանքի և վաստակած աշխուրդի ամենորյա հաշվառքը պետք է կատարվի «աշխուրդի հաշվառման տեղագրում», մոտավորապես այսպիսի ձևի.

Աշխատանքների տեսակները Աշխատողի տղաքանուկը, անուկը և հայրանուկը	(Ցույց է տրվում ամսաթիվը)		
	Կատարված աշխատանքի քանակը	Համարում է աշխուր	
		Ըստ նորմայի	Վորակի հաշվառումով
Գուրամավարներ			
1. Իվանով Յ. Ս.	1,25	1,75	1,75
2. Պետրովա Գ. Ի.	1,40	1,96	1,96
3. Սեմենով Ս. Գ.	1,0	1,40	1,26
Տափանդուկներ			
4. Ֆեդին Ա. Պ. և այլն	2,0	1,5	1,5

Այս տեղեկագրում գրվում է, թե ինչքան աշխատանք է կատարել և այս աշխատանքի համար քանի աշխուր է համարում, յեթե նորմայով հաշվվի, իսկ կողքի սյունյակում գրվում է, թե ինչքան պետք է հաշվել աշխատանքի վորակը հաշվի առնելով: Յեթե աշխատանքը վատ վորակի յե, դրա համար աշխուր չեն գրվում: Աշխուրդը պետք է գրել միայն լավ կատարված աշխատանքի համար:

Յուրաքանչյուր հինգ օրից հետո աշխուրդն այս տեղեկագրից պետք է գրանցվեն կոլտնտեսականի աշխատանքային գրքույկում: Աշխուրդը ամբողջ ժամանակ պետք է գտնվի կոլտնտեսականի ձեռքում, իսկ աշխուրդի գրանցումը պետք է կատարվի փոշ թե կոլտնտեսության գրասենյակում, այլ անմիջապես բրիգադում, աշխատանքի վայրում:

Վարչական և սպասարկող անձնակազմի—կոլտնտեսության նախագահի, ֆերմաների վարիչների, հաշվապահական աշխատողների, պահեստապետների, պահապանների, մանկամսուրների գայակների համար աշխուրդը նշանակում է կոլտնտեսության վարչությունը ամսվա, այլ փոշ թե օրվա հաշվով: Այս դեպքում նախ քան աշխուրդը նշանակելը, պետք է ստուգել, թե ինչպես է կատարվել հանձնարարված աշխատանքը: Յեթե սպասարկող

և վարչական աշխատողների աշխատանքում հայտաբերված են թերություններ—աշխատանքների և մթերքների արտադրանքի պլանի թերակատարում ֆերմաներում, գրասենյակում հաշվառումը ժամանակին չկատարելը, կոլտնտեսային գույքի վատ պահպանումը պահեստապետի և պահապանի կողմից—այդ դեպքում այս կոլտնտեսականների աշխուրդի քանակը պետք է իջեցնել մինչև 20 տոկոսի սահմաններում՝ ի դիմաց այն քանակի, վոր պետք էր նշանակել, յեթե աշխատանքը հաջող և լավորակ կատարված լիներ:

Բրիգադիւրների և վորակի տեսուչների համար աշխուրդը նշանակում է կոլտնտեսության վարչությունը, նայած թե նրանք ինչպես են ստուգել և ընդունել աշխատանքը բրիգադում: Յեթե բրիգադի աշխատանքը լավ և ժամանակին է կատարված, ապա բրիգադիւրին նշանակվում է,—յեթե նա առաջին տարին է բրիգադիւր՝ 1,25 աշխուր մի օրվա աշխատանքի համար, իսկ յեթե մի տարուց ավելի յե՝ 1,5 աշխուր: Վորակի տեսուչին նշանակվում է 1 աշխուր օրական աշխատանքի համար: Յեթե աշխատանքը լավ և ժամանակին չի կատարված, այդ դեպքում աշխուրդը պետք է իջեցվեն:

Բացի դրանից, վորպեսզի ճիշտ տարվի աշխուրդի հաշվառքը, յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ պետք է ունենալ աշխուրդի հաշվառման գիրք: Այս գրքում գրանցվում են յուրաքանչյուր կոլտնտեսականի վաստակած աշխուրդի քանակը, իսկ ամսվա վերջում այս աշխուրդը հաշվվում են ամբողջ կոլտնտեսության մեջ: Այսպիսով կոլտնտեսականը պարտական է ամեն օր իմանալու, թե իրեն քանի աշխուր է նշանակված կատարված աշխատանքի համար, իսկ հնգորդյակի վերջում այս աշխուրդը պետք է գրվեն աշխուրդույկում: Կոլտնտեսության մեջ ամեն հնգորդյակին վաստակած աշխուրդը գրանցվում են հաշվառքի գրքում, իսկ ամսվա վերջում արդեն հայտնի պետք է լինի, թե բոլոր կոլտնտեսականներն ինչքան աշխուր են վաստակել ամբողջ կոլտնտեսության մեջ:

Վերջաբանում շատ տեղին է հիշել ընկ. Շեբուդակի խոսքերը, վոր նա ասել է լավագույն բրիգադիւրների յերկրային հավաքում:

«Ժամանակն է վերջ առ հավասարեցմանը, վորը կազմալուծում է մեր կոլտնտեսությունները: Սա հսկայական շարժ է, յերբ գաշտում թխած հաց են տալիս բոլորին—այս արդեն հավասարեցում է, վորն անխուսափելիորեն հասցնում է նրան, վոր աշխատանքային կարգապահությունն

ընկնում եւ։ Ով ինչքան աշխատել է, պետք է ստանա, և ով ավելի լավ է աշխատում—նա պետք է ավելի լավ ապրի։ Մենք չենք ուզում աղքատութեան հավասարութիւն, վորին սովորել են գյուղացիները։ Իսկ մենք հիմա ուզում ենք, վորպեսզի լավագոյն աշխատողներն ավելի լավ ստանան։ Սրանից շահագործում չի կարող աճել, վորովհետև արտադրութեան միջոցները կոլտնտեսային կամ պետական են և, հետևաբար, կոլտնտեսականը չի կարող կուլակ դառնալ։ Իսկ մենք բավականաչափ չենք խրախուսում առաջավորներին և բավականաչափ չենք սեղմում հետամնացներին։ Յես կարծում եմ, վոր դուք պետք է հսկողութեան ներքո վերցնեք բոլոր նրանց, ովքեր անցյալ տարի ունեն 100 աշխոր. քննել, թե ինչո՞ւ համար նրանք 100 աշխոր ունեն, յերբ միջին հաշիւով յերկրամասում աշխատունակ կոլտնտեսականն ունի 200 աշխոր։ Իհարկե, բոլորին չի կարելի մի սանտրով սանրել. կարող է պատահել մարդը հիվանդ է յեղել, կարող է պատահել տղաների հետ չի վարվել, ուրիշ տեղ աշխատանքի յե դնացել, սակայն նրանք, ովքեր հանցավոր են, այդպիսիներին հավաքել, խոսել, նախազգուշացնել, վոր այս գարնանը նրանք ցույց տան, թե իրենք դատարկապորտներ չեն, վո՞ճրագործ չեն կոլտնտեսութեան դեմ, ու՞ժեղ կերպով բացատրել նրանց, վոր պետք է վերջ տան այս անկայունութեանը, այս կուլակային մողային»։

Այս կարճ խոսքերում ասված է, թե հանուն ի՞նչի և ի՞նչպէս պետք է պայքարի յուրաքանչյուր կոլտնտեսական, վորպեսզի կատարվի կուսակցութեան կողմից դրված խնդիրը—«գարձնել բոլոր կոլտնտեսութեանները բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին ունևոր»։

ԳԱՐՆԱՆԱՅԱՆԻ ԱՇԻԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԿՈՆՏՆԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆՈՐՄԱՆԵՐ ՅԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ս.գով-Սեվծովյան Յեկրային Հողվարչութեան 1934 թ. մարտի 12-ին վորոշումը, հաստատված ՀԿ(բ)Կ Յեկրկոմի կողմից)

1. ԽՍՀՄ Հողփողկոմատի կողմից, նախքան 1934 թվի արտադրանքի նորմաների հաստատումը, կոլտնտեսութեաններում գարնանացանի աշխատանքների համար սահմանել որական արտադրանքի հետևյալ մոտավոր նորմաները.

- ա) վար մի խոփանի գութանով 0,5—0,7 հեկտար
- բ) վար յերկխոփանի գութանով 1, 1—1,4 հեկտար
- գ) տափանում չի հետքով 4,0—4,5 հեկտար
- դ) ձեռքի գերավաղ ցանքս 2,0—2,5 հեկտար
- ե) 12 շարքանի ցանքս դիսկավոր շարքացանով 5,0—5,5 հեկտար
- զ) 11 շարքանի ցանքս խոփիկավոր շարքացանով 4,0—4,5 »

2. Պարտավորեցնել շրջանային հողբաժինների վարիչներին և ՄՏ կայանների գերեկտորներին մոտավոր նորմաների սահմաններում, վոր ուշ քան մարտի 20-ը, ապահովել գարնանացանի աշխատանքների համար արտադրանքի կայուն նորմաների հաստատումը կոլտնտեսութեանների վարչութեաններին կողմից և այդ նորմաների ընդունումը կոլտնտեսականների ընդհանուր ժողովների կողմից, հաշիվ առնելով առանձին բրիգադների աշխատանքների առանձնահատկութեանը, հողի բնույթը և այլն։

Կոլտնտեսութեանների ընդունած արտադրանքի նորմաները ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսութեաններում պետք է հաստատվեն ՄՏ կայանի գերեկտորի, իսկ առանձին կոլտնտեսութեաններում շրջհողբաժինների վարիչների կողմից։

3. Մինչև ԽՍՀՄ Հողփողկոմատի կողմից 1934 թվականի համար աշխատանքների գործավարձային գնահատումների հաստատումն աշխորերով, գարնանային աշխատանքների համար կոլտնտեսականներին սահ-

մանել հետևյալ չափերով աշխուրհի արտադրանքի որական նորմաները կատարելու համար.

- ա) վարողին և շարքացանի վրա աշխատողին 1,75 աշխուր
- բ) դերավաղ ցանքս կատարողին 2 աշխուր
- գ) տափանդողին 1,5 աշխուր
- դ) վարի և ցանի վրա քշողին 1,25 աշխուր

4. «Բարձրագույնի նախապատրաստվելու գործն ավարտելու և գարնանացանը հաջողությամբ անցկացնելու միջոցների մասին» ՀԿ(բ) և Յերկրկամի և Յերկրգործի մասին 1934 թվականի փետրվարի 28-ին կայացրած վորոշման համապատասխան, ապահովել վորպեսզի վորոշված ժամկետում և լավ վորակով գերակատարված արտադրանքի նորմաների համար, աշխատանքի այն մասը, վորը նորմայից ավել և կատարված, վարձարվի մեկու կես անգամ ավելի աշխուրհերով:

5. «Կոլտնտեսություններում գյուղատնտեսական գանազան աշխատանքներն աշխուրհերով գնահատելու մասին» ԽՍՀՄ Հողփողկոմատի 1933 թվականի փետրվարի 28-ին կայացրած վորոշման համաձայն, անցկացնել աշխատանքների ընդունումը և աշխատանքների վորակի վարձատրությունը հետևյալ յեղանակով.

ա) Ինչպես կոլտնտեսականների խմբերի, այնպես էլ առանձին կոլտնտեսականների կողմից աշխատանքների ավարտման չափի համաձայն, աշխատանքն ընդունում և բրիգադիրը:

Արգելել բրիգադիրին ընդունել և աշխուրհեր նշանակել այն աշխատանքների համար, վորոնք անվորակ են կատարված (բացառելով վարելը, չցանած տեղերը թողնելը, մոլախոտեր թողնելը և այլն). անվորակ աշխատանքը նորից պետք և կատարվի:

բ) Բրիգադիր աշխատանքն ընդունում և կոլտնտեսություն վարչությունը կամ նրա տեղակալը՝ ըստ աշխատանքի ավարտման չափի: Ըստ վորում աշխատանքն անբավարար լինելու դեպքում, կոլտնտեսություն վարչությունը 10% սահմաններում զեղջ և կատարում աշխուրհերի այն ընդհանուր թվից, վոր վաստակել և բրիգադր, այդ թվում նաև բրիգադիրը:

գ) Բացատրել կոլտնտեսականներին, վոր յեթե բրիգադր կոլտնտեսային միջին բերքից ավելի շատ բերք ստանա, այդ դեպքում բրիգադիր բոլոր անդամների աշխուրհերի թիվը կավելացվի իրենց վաստակած աշխուրհերի ընդհանուր թվի 20 տոկոսի սահմաններում՝ հենց նույն չափերով միաժամանակ պակասեցրած (մինչև 20 տոկոս) այն բրիգադիների հաշվին, վորոնք տալիս են կոլտնտեսային միջին բերքից ավելի ցածր բերք:

դ) Պարտավորեցնել շրջնոգրած իններին և ՄՏԿ գիրկատորներին մշակել այս վորոշումը բոլոր բրիգադային և կոլտնտեսային ժողովներում:

ՄՏԿ-ՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՀՈՂՓՈՂԿՈՄԱՏԻ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՅԵՎ ՎԱՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱԿՏՈՐԻՍՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՏՎԱԿԱՆ (ՊՐՈԳՐԵՍԻՎ) ՎԱՐՁԱՏՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ազով-Սեվծովյան Յերկրգործի միջվ ՀԿ(բ) Յերկրկոմի 1934 թվականի մարտի 13-ի վորոշումը)

1. Հաստատել տրակտորների հետևյալ մտավոր միջին արտադրանքի նորմաները վարի համար և տրակտորիստների առաջատվական վարձատրման աղյուսակը (մի հերթում կատարված աշխատանքի համար):

Տրակտորների անունները	Ինչ գույքանով և կատարվում վարը	Արտադրանքի միջին 10 մասյա հերթափոխումների ընթացքում	Նորմանի կատարման հարցը	Տրակտորիստների առաջատվական վարձատր. աղյուսակը							
				Տրակտորիստների համար աշխուրհերի նշանակումը							
				Մշակատ. 1-ին միջավորի համար	Մշակատ. 2-րդ միջավորի համար	Մշակատ. 3-րդ միջավորի համար	Մշակատ. 4-րդ միջավորի համար	Մշակատ. 5-րդ միջավորի համար	Մշակատ. 6-րդ միջավորի համար	Մշակատ. 7-րդ միջավորի համար	
Փորձոն-Պուտիլովեց . . .	Տրակտորային գույքան 2 կորպուսանի	1,6	3,7	1 1/2	5.	0,7	0,9	1,6	2,4	3,0	—
Ինտերնաց. 10 20	Նույնը 3 կորպուսանի	2,2	3,7	2	5.	0,4	0,6	0,8	1,2	1,8	2,3
ՄՏԶ, Զոն-Դիր, Ինտեր. 15, 30, 23 36	Նույնը 4 կորպուսանի	3,75	3,7	1	5.	0,5	0,7	1,2	1,7	2,2	2,7
Կեյս 26 40	Տրակտորաքաշ արորները 4—5 կորպուսանի	4,0	3,7	1	5.	0,4	0,6	1,3	1,6	2,1	2,6
ՉՏԶ	Յերեք 4 կորպուսանի	10,9	3,7	2	5.	0,2	0,3	0,5	0,8	1,2	1,6

ԿԴՅ տրակտորով աշխատող տրակտորիստի վաստակած աշխուրհի համար յերաշխավորական նվազագույնի չափը բարձրացնել մինչև 3 ուրբի (փոխանակ 2 ո. 50 կոպեկի):

Ազով-Սեվծովյան Յերկրային հողվարչության պես՝ ՈՒԻՆՑՈՎ

Հանձնարարել Յերկրհողվարչությանը 3 որվա ժամկետում հրատարակել ծավալուն մոտավոր արտադրանքի նորմաները և վարի աշխատանքների առաջատվական վարձատրության աղյուսակը բոլոր տրակտորներին համար և արտադրանքի մոտավոր նորմաները գարնանացանի մնացած բոլոր աշխատանքների համար (տափանում, դիսկավորում, հացահատիկային և շարատունկ մշակութիւնների ցանքս և կուլտիվացիա), այս դեպքում հաշվի առնելով յերկրամասի ուայոնների առանձին խմբերի հողային զանազան պայմանները:

2. Գարնանային դաշտային աշխատանքների համար արտադրանքի մոտավոր նորմաների և վարի աշխատանքների առաջատվական վարձատրման աղյուսակի սահմաններում, ՄՏԿ դիրեկտորները պարտավոր են վոչ ուշ՝ քան մարտի 20-ը սահմանել արտադրանքի կայուն նորմաներ ՄՏ կայանի բոլոր աշխատանքների համար և տրակտորիստների առաջատվական վարձատրության կայուն դրույքներ վարի համար, հաշվի առնելով հողի և կիրառվելիք գյուղատնտեսական մեքենաների և կցվող գործիքների բնույթը:

3. Մնացած բոլոր գարնանային դաշտային աշխատանքները (ցանքս, տափանում և այլն), բացի վարելուց, համաձայն Աշխատանքի և Պաշտպանության Նորհրդի (ՇՈ) 1933 թ. սեպտեմբերի 21-ի վորոշման, վճարվում են տրակտորիստներին 3 աշխուրվա չափով արտադրանքի նորմաների կատարման համար:

Ցանքսի, տափանման և գյուղատնտեսական այլ աշխատանքների (բացի վարից) մի հերթափոխության համար սահմանված արտադրանքի նորմաները գերակատարելու դեպքում, նորմայից ավելի կատարված աշխատանքի համար տրակտորիստին նշանակվում և մեկ ու կես անգամ ավելի աշխուր:

4. Արտադրանքի սահմանված նորմաները և տրակտորիստներին վճարվող դրույքները պետք է հասցվեն յուրաքանչյուր բրիգադին և յուրաքանչյուր առանձին տրակտորիստին վոչ ուշ՝ քան մինչև մարտի 25-ը: ՄՏԿ դիրեկտորները և քաղաքապետների պետերը պետք է բացատրեն բոլոր տրակտորիստներին արտադրանքի նորմաները և աշխուրերը սահմանելու կարգը:

5. Պարտավորեցնել ՄՏ կայանների դիրեկտորներին և քաղաքապետներին պետերին կատարել ամենուրյա հսկողություն վարի և գարնանացանի համար սահմանված արտադրանքի նորմաների կատարման վրա տրակտորիստների կողմից, ինչպես նաև ամենուրյա հսկողություն՝ տրակտորիստների համար աշխուրերը ձեռն նշանակելու վրա:

Ազով-Սեվծովյան Յերկրհողվարչի նախագահ՝ Լ.Ս.ԻՆ

ՀԿ(բ)Կ Ազով-Սեվծովյան Յերկրհողի ֆարսուղար՝ ՇեֆՈՒՎԱՅԵՎ

ՔԱՂՀԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱԳՐԱՆՔԻ ՄՈՏԱՎՈՐ ՆՈՐՄԱՆԵՐ ՅԵՎ ԱՇԽՈՐԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՏԱՎՈՐ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ազով-Սեվծովյան Յերկրհողվարչի յեվ ՀԿ(բ)Կ Յերկրհողի 1934 թ. ապրիլի 9-ի վորոշումը)

1. Քաղհանի համար սահմանել արտադրանքի մոտավոր նորմաներ և աշխատանքի գնահատումներ աշխուրերով:

Աշխատանքների անունները	Արտադրանքի միավոր (հեկտար) (հաշվարկային)	Միավորի արժեքը	Միավորի քանակը	Նորմաների արժեքը (հաշվարկային)
1. Հասկավոր հացաբույսերի քաղհանը՝ նայած աղտոտվածության	1,0 հեկտ.	2 մարդուց վոչ ավելի		1,25
2. Յեղիպտացորենի և արևածաղկի միջշարք հերկը ձեռքարչ կուլտիվատորներով	1,75—2,25	2		քաղհ. 1,50 քշողին 1,0
3. Գենադերչակի միջշարքերի հերկը ձեռքարչ կուլտիվատորներով	1,75—2,25	2		քաղհ. 1,75 քշողին 1,0
4. Յեղիպտացորենի, արևածաղկի, գենադերչակի ձեռքարչան շարքերում, կուլտիվատորի աշխատանքից հետո (նայած աղտոտվածության և միջշարքերի լայնության)	1,0	3—4		1,50
5. Արևածաղկի, յեղիպտացորենի և գենադերչակի համատարած քաղհանն առանց կուլտիվացիայի	1,0	5—7		1,50
6. Շաքարածակնդեղի քանդումը «Ուկրաինկա» ձեռքարչ թորիսով	1,5—5,0	3		քաղհ. 1,75 քշողին 1,0
7. Շաքարածակնդեղի քանդումը ձեռքով	1,0	5—6		1,50
8. Շաքարածակնդեղի փնջումը «Ուկրաինկա» ձեռքարչ թորիսով	4,5—5,5	3		քաղհ. 1,75 քշողին 1,0
9. Փնջերի ջոկումը ձեռքով (շաքարածակնդեղի փնջումից հետո)	1,0	10—12		1,50
10. Շաքարածակնդեղի ձեղքումը (առանց փնջավորելու)	1,0	15—20		1,50
11. Շաքարածակնդեղի ստուգումը	1,0	8—11		1,75

Աշխատանքների անունները	Արտադրանքների քանակը (հազ.)	Միավորների քանակը	Միավորների արժեքը (հազ. դր.)
12. Շաքարաձականդեղի միջլարքերի հերկը «Ուկրաինկա» թորիտով	4,5—5,5	3	քաղհ. 1,75 բշողին 1,0
13. Ծխախոտի միջլարքերի հերկը ձիաբորչ կուլտիվատորներով	1,5—1,75	2	քաղհ. 1,75 բշողին 1,0
14. Ծխախոտի առաջին քաղհանը շարքերում, կուլտիվատորից հետո	1,0	7—8	1,50
15. Ծխախոտի յերկրորդ քաղհանը շարքերում, կուլտիվատորից հետո	1,0	6—7	1,50
16. Ծխախոտի համատարած ձեռքի քաղհան	1,0	12—16	1,50
17. Բամբակի միջլարքերի մշակումը ձիաբորչ կուլտիվատորով	1,5—2,0	2	քաղհ. 1,75 բշողին 1,0
18. Բամբակի շարքերի առաջին ձեռքի քաղհանը, կուլտիվատորից հետո	1,0	3—4	1,50
19. Բամբակի շարքերի յերկրորդ ձեռքաքաղհանը, կուլտիվատորից հետո՝ նոսրացնելով	1,0	6—8	1,50
20. Բամբակի շարքերի յերկրորդ ձեռքաքաղհանը կուլտիվատորից հետո շարքերը կանոնավորելով	1,0	3—4	1,50
21. Շարատունկ-տեխնիկական մշակումը թիթերի ցանքերի տափանում	4,5—5,0	1	1,50

Միջլարքային տարածութունները արակտորներով մշակելու նկատմամբ ղեկավարվել արակտորների համար սահմանված արտադրանքի նորմաներով:

Միջլարքային տարածութունները արակտորներով մշակելու նկատմամբ ղեկավարվել արակտորների համար սահմանված արտադրանքի նորմաներով:

Ու. Արտադրանքի այս մոտավոր նորմաների հիման վրա, վոչ ուշ քան ապրիլի 25, յուրաքանչյուր կուլտնտեսության մեջ ընդունել արտադրանքի կայուն նորմաներ, հաշվի առնելով հողամասերի աղտոտվածութունը, շարքամիջյան տարածութունների լայնութունը և կիրառվելիք գործիքների բնույթը:

Կուլտնտեսութունների կողմից ընդունված արտադրանքի նորմաները, վոչ ուշ ապրիլի 30-ից, ՄՏ կայաններից սպասարկվող կուլտն-

տեսություններում պետք և հաստատվեն ՄՏԿ ղերեկտորների կողմից իսկ մնացած կուլտնտեսություններում շրջնողբաժինների վարիչների կողմից:


III. «Գարնանացանին նախապատրաստվելու գործի ավարտման և գարնանացանի հաջող անցկացման միջոցների մասին» Յերկրագործկոմի և ՀԿ(բ)Կ Յերկրկոմի 1934 թ. մարտի 1-ին կայացրած վորոշման համաձայն, ապահովել, վորպեսզի վորոշված ժամկետում արտադրանքի նորմաները գերակատարելու համար, աշխատանքի վորակը պահպանելով հանդերձ, աշխատանքի այն մասը, վորը կատարված է և նորմայից ավելի, վարձատրվի մեկ ու կես անգամ ավելի աշխուրդով:

IV. Քաղհանի աշխատանքներն ընդունելու և աշխատանքի վորակի համաձայն աշխուրդը նշանակելու ուղղությամբ ղեկավարվել հետևյալով.
ա) աշխատանքն ընդունում է բրիգադիրը, նայած թե ինչ չափով են ավարտված աշխատանքները, ինչպես կուլտնտեսականների խմբերի, այնպես էլ առանձին կուլտնտեսականների կողմից:

Արգելի բրիգադիրին ընդունել և աշխուրդը նշանակել այն աշխատանքի համար, վորը վատ է կատարված: Անվորակ կատարված աշխատանքը պետք և նորից կատարվի:

բ) Աշխատանքն ավարտելուն պես բրիգադիրից աշխատանքն ընդունում է կուլտնտեսության նախագահը կամ նրա տեղակալը: Ըստ վորում, աշխատանքն անբավարար լինելու դեպքում, կուլտնտեսության վարչությունը 10 տոկոսի սահմաններում գեղջ է կատարում աշխուրդի այն ընդհանուր թվից, վոր վաստակել է բրիգադը, այդ թվում նաև բրիգադիրը:

գ) Բացառել կուլտնտեսականներին, վոր յեթե բրիգադը կուլտնտեսային միջին բերքից ավելի շատ բերք ստանա, այդ դեպքում բրիգադի բոլոր անդամների աշխուրդի թիվը կավելացվի իրենց վաստակած աշխուրդի ընդհանուր թվի 20 տոկոսի սահմաններում, հենց նույն չափով միաժամանակ պահասեցրած (մինչև 20 տոկոս) այն բրիգադների հաշվին, վորոնք տալիս են կուլտնտեսային միջին բերքից ավելի ցածր բերք:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կոլտնտեսությունները բուլղիկյան, իսկ կոլտնտեսականներին
ունեւոր դարձնելը կարևորագույն խնդիր է 3

Կոլտնտեսության մեջ աշխատավարձ չի կարող լինել 5

Կոլտնտեսության յեկամուտները բաշխել միայն գործադրած
աշխատանքի քանակի և վորակի համաձայն 7

Աշխուրը վորպես աշխատանքի գնահատման պայմանական միավոր 8

Ինչպես գնահատել աշխատանքներն աշխուրերով 10

Յուրաքանչյուր կոլտնտեսականի կարևորագույն խնդիրն է—
կատարել արտադրանքի նորմաները, վորակական բարձր
չուցանիշներ տալով հանդերձ 16

Հանուճ 250—300 աշխուրերի 18

Չորայլել աշխուրերը 20

Ինչպես հաշվել աշխուրերը 21

Հավելված. Գարնանացանի աշխատանքի համար կոլտնտեսու-
թյուններում արտադրանքի նորմաներ և գործավարձային
գնահատումներ սահմանելու մասին 25

ՄՏ կայաններում և Հողփողկոմատի խորհանտեսություններում
տրակտորային աշխատանքների համար տրակտորիստների
աշխատանքների առաջատվական (պրոգրեսիվ) վարձատրում
սահմանելու մասին (Ազով-Սևծովյան Յերկրգործկոմի և
ՀԿ(բ)Կ Յերկրկոմի 1934 թվի մարտի 13-ի վորոշումը) 27

Քաղհանի համար արտադրանքի մոտավոր նորմաներ և աշխու-
րերով աշխատանքի մոտավոր գնահատումներ սահմանելու
մասին (Ազով-Սևծովյան Յերկրգործկոմի և ՀԿ(բ)Կ Յերկրկոմի
1934 թվի ապրիլի 9-ի վորոշումը) 29



Գինը 50 Կողմ.
Цена 50 Коп.

16458

34-7
Case

1007

1
1

11 МАЯ 1934

На армянском языке

Д. И. Фирсов

ЧТО ТАКОЕ ТРУДОДЕНЬ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԳՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ

ԴՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՎԱՍԿԱՅԻ ՓՈՂ. № 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏՐ)